

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՏԵՂԱԿԱՆ
ԻՆՔԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՄԱՍԻՆ

Երևան

սեպտեմբեր, 2019թ.



Սույն ուղեցույցը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ, «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից իրականացվող «Տեղեկատվության մատչելիություն և հետաքննական լրագրություն առավել իրազեկված քաղաքացիների համար» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակում։ Դրա բովանդակության համար պատասխանատվություն է կրում Իրավունքների պաշտպանության նախաձեռնություն հիմնադրամը և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության և/կամ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի տևսակետները։

This guidline was produced with the financial support of the European Union in the framework of the sub-grant project provided under the "Access to Information and Investigative Journalism for Better Informed Citizens" project implemented by the Freedom of Information Center NGO. Its contents are the sole responsibility of Rights Protection Initiative Foundation and do not necessarily reflect the views of the European Union and/or Freedom of Information Center



ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՍԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Հնչայիսի՝ դրույթներ է պարունակում ՀՀ Սահմանադրությունը, որոնք առնչվում են տեղական ինքնակառավարմանը:

Տեղական ինքնակառավարման համակարգի կազմավորման դրույթները արտացոլված են ՀՀ Սահմանադրության 7-րդ գլխում: Սահմանադրությունը տեղական ինքնակառավարումը համարվում է համայնքի՝ որպես վարչական միավորի բնակչության իրավունքը: Տեղական ինքնակառավարումը համայնքն իրականացնում է սեփական պատասխանատվությամբ, որը կոչված է լուծելու տեղական նշանակության հարցերը, և դրա նպատակն ըստ Սահմանադրության բնակիչների բարօրությունն է:

2. Ի՞նչ են իրենցից ներկայացնում «համայնք», «բնակավայր» և ովքե՞ր են համարվում համայնքի բնակիչներ:

Համայնքը մեկ կամ մի քանի բնակավայրերի բնակիչների հանրություն և վարչատարածքային միավոր է, որի սահմաններում համայնքի բնակիչներն ուղղակիորեն կամ օրենքով սահմանված ընտրովի մարմինների միջոցով իրականացնում են տեղական ինքնակառավարումը:

Բնակավայրը բնակչություն ունեցող, կառուցապատված, տարածքային ամբողջականություն կազմող և այլ բնակավայրերից տարածքային, տնտեսական կամ պատմական առումով տարանջատված տարածքային միավոր է:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ համայնքի բնակիչ է այն անձը, որը հաշվառված է տվյալ համայնքի բնակչության ռեգիստրում:

3. Ի՞նչ է իրենից ներկայացնում տեղական ինքնակառավարումը:

Տեղական ինքնակառավարումը բնակչության բարկեցության բարելավման նպատակով սեփական պատասխանատվությամբ և օրենքի շրջանակներում ինքնուրույն գործող տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքային խնդիրները լուծելու և համայնքի սեփականությունը տնօրինելու ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված իրավունքն ու համայնքի կարողությունն է:

4. Որո՞նք են տեղական ինքնակառավարման մարմինները և ինչպիսի՝ ընդհանուր բնութագիր ունեն տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները:

Տեղական ինքնակառավարման մարմիններն են համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, որոնք ընտրվում են հինգ տարի ժամկետով:

Համայնքի բոլոր հնարավոր լիազորությունները, որոնք անհրաժեշտ են համայնքային նշանակության հարցերը լուծելու համար լինում են սեփական՝ համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակով, ինչպես նաև պետության կողմից օրենքով

պատվիրակված՝ պետական մարմինների լիազորությունների առավել արդյունավետ իրականացման նպատակով: Սեփական լիազորությունները, իրենց հերթին Սահմանադրությունը տարանջատում է երկու խմբի՝ պարտադիր, որոնք անմիջականորեն նախատեսվում են օրենքով, և կամ հայեցողական: Կամավոր լիազորություններն օրենքով սպառիչ սահմանված չեն, կամ կարող են ընդհանրապես չսահմանվել օրենքով:

5. Սոցիալական նշանակություն ունեցող ինչպիսի՞ խնդիրներ է իրավասու լուծել համայնքի ղեկավարը:

Սոցիալական նշանակություն ունեցող խնդիրների բնագավառում առանձնահատող կարևորություն ունեն երեք՝ սոցիալական օգնության տրամադրում, բնակչության զբաղվածության խնդրի լուծում և սոցիալական պայմանների բարելավում:

Համայնքի ղեկավարը սոցիալական պաշտպանության բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները:

1) Միջոցներ է ձեռնարկում հայտնաբերելու սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց և ընտանիքներին: Նշված լիազորություններն իրականացվում են թիրախային և հասցեական մոտեցմամբ՝ սոցիալական աջակցությունը ցուցաբերելով ըստ անհատական վերականգնման ծրագրի:

2) Միջոցներ է ձեռնարկում սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց և ընտանիքներին՝ օգնելու հայտնաբերել և օգտագործել դժվարություններ հաղթահարելու իրենց կարողությունները.

3) Նպաստում է համայնքում բնակվող սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց և ընտանիքների սոցիալական կարիքների բավարարմանը՝ կազմակերպելով տնային այցելություններ և հնարավորության դեպքում մատուցելով «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված սոցիալական ծառայություններ, կամ ուղղորդելով սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններ կամ մասնագիտացված այլ կազմակերպություններ:

6. Ինչպե՞ս է իրականացվում համայնքի ավագանու գործունեությունը, և ինչպե՞ս կարող են համայնքի բնակիչները մասնակցել համայնքի ավագանու նիստերին:

Համայնքի ավագանու գործունեությունը կազմակերպվում է նիստերի միջոցով: Համայնքի ավագանին ընդունում է կանոնակարգ, որով սահմանվում են ավագանու գործունեության կազմակերպումը, նիստերի նախապատրաստումը և անցկացումը: Ավագանու նիստերն անցկացվում են ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ:

7. Ի՞նչ իրավունքների ունեն սոցիալական աջակցություն հայցող և ստացող անձինք:

Սոցիալական աջակցություն հայցող (սոցիալական աջակցություն ստանալու համար դիմած) անձն իրավունք ունի՝

1) ստանալու տեղեկատվություն իր սոցիալական իրավունքների, դրանց իրականացման պայմանների, կարգի և տվյալ սոցիալական խնդիրը լուծելու եղանակների մասին.

2) պահանջելու և ստանալու սոցիալական աջակցություն՝ օրենքով սահմանված բավարար հիմքերի առկայության դեպքում.

3) ստանալու իր կյանքի և առողջության համար անվտանգ սոցիալական ծառայություններ.

4) սոցիալական աջակցության տրամադրման մերժման դեպքում ստանալու գրավոր պատասխան, կամ այդ մասին իրազեկվելու Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ եղանակներով .

5) մասնակցելու սոցիալական աջակցություն տրամադրելու վերաբերյալ որոշման ընդունման գործընթացին.

6) հրաժարվելու սոցիալական աջակցություն ստանալուց:

8. Ինչպիսի՞ն են տեղական ինքնակառավարման մարմնի լիազորությունները սոցիալական ծառայությունների մատուցման բնագավառում:

Տեղական ինքնակառավարման մարմնը սոցիալական ծառայություններ է տրամադրում՝

1) պետության պատվիրակած լիազորությունների շրջանակներում.

2) տեղական սոցիալական ծրագրերի շրջանակներում.

3) կամավոր խնդիրների լուծման նպատակով սահմանված սեփական լիազորությունների իրականացման շրջանակներում:

9. Ինչպե՞ս և ինչ ժամկետներում է տրամադրվում տեղեկատվությունը:

Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը։ Ընդ որում, անձն ունի ոչ միայն տվյալ տեղեկությանը ծանոթանալու իրավունք, այլև տվյալ փաստաթղթում առկա տեղեկությունը կամ փաստաթղթի պատճեն ստանալու իրավունք։

Քաղաքացիներին տեղեկություն ստանալու գրավոր հարցման պատասխանը տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Քանավոր հարցման պատասխանը տրվում է բանավոր հարցումը լսելուց հետո անհապաղ կամ հնարավորինս սեղմ ժամկետում։

10. Ո՞ր դեպքերում պետական մարմնը կարող է մերժել տեղեկության տրամադրումը:

Տեղեկության տրամադրումը մերժվում է, եթե-

-պարունակում է պետական, ծառայողական,

-բանկային, առեւտրային գաղտնիք,

- խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը,

-պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալներ,

-բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք), խախտում է հեղինակային իրավունքը եւ (կամ) հարակից իրավունքները։

11. Ինչպե՞ս կարելի է բողոքարկել տեղեկություն ստանալու մերժումը:

Օրենսդրությամբ սահմանվում է տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանության հետևյալ ձևերը՝

1. վերանայում վերադասության կարգով

2. բողոքարկում դատական կարգով։

12. Ինչպե՞ս են համայնքի բնակիչները մասնակցում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը:

Համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը սահմանվում է որպես համայնքում իրականացվող գործընթաց, որի միջոցով բնակիչները, առանց խտրականության, տեղեկացվում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կարող են ուղղակի կամ անուղղակի ներգործություն ունենալ տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների վրա:

13. Կարող են արդյոք համայնքի բնակիչները ծանոթանալ համայնքի բյուջեին:

Համայնքի բյուջեն, ինչպես նաև համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հրապարակային փաստաթղթեր են, որոնց կարող է ծանոթանալ համայնքի յուրաքանչյուր բնակիչ:

14. Ինչպե՞ս է իրականացվում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հաշվետվությունը:

3000 և ավելի բնակիչ ունեցող համայնքը պետք է ունենա պաշտոնական համացանցային կայք, որի ստեղծումը ու վարումը ապահովում է համայնքի ղեկավարը՝ օրենքով և համայնքի ավագանու սահմանաձ կարգով:

15. Ի՞նչ է իրենից ներկայացնում Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան:

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան երաշխավորում է քաղաքացիաների մասնակցությունը պետության գործերին, տեղական ինքնակառավարման իշխանությունը մոտեցնում է ժողովրդին՝ ապահովելով ընդունվող որոշումների առավելագույն արդյունավետությունը:

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան բաղկացած է 18 հոդվածներից, որոնցից տասնմեկը անդրադառնում են սկզբունքների սահմանմանը: Դրանցում առաջնային է համարվում այն մոտեցումը, որ տեղական ինքնակառավարման սկզբունքը պետք է ամրագրված լինի օրենսդրության, իսկ հնարավորության դեպքում նաև Սահմանադրությամբ: Ինչն էլ երաշխավորում է տեղական ինքնակառավարման համակարգի անկախությունը և ապահովագրում այն գործադիր իշխանության նեգործությունից:

Տեղական ինքնակառավարման վերաբերյալ հավելյալ տեղեկություններ և իրավաբանական խորհրդատվություն ստանալու նպատակով կարող եք այցելել www.rpif.am կայք, կամ մեր Փեյսբուքյան էջ՝ rights protection initiative foundation :

(+37491)541427

ՀՀ, 0010, ք. Երևան, Վարդանանց 10

www.rpif.am

rpif.initiative@gmail.com

Երևան

սեպտեմբեր, 2019թ.